

ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դուք խնդրագիր՝ եք ներկայացրել Լիտվայում ապաստան տրամադրելու մասին, քանի որ գտնուի եք, թե չեք կարող վերադառնալ Ձեր երկիր՝ հետապնդումների, բռնության վտանգի պատճառով կամ ռազմական գործողությունների հետևանքով: Խնդրագրի ներկայացման պահից ի վեր Դուք հանդիսանում եք ապաստան հայցող, որը Ձեզ շնորհում է որոշակի հատուկ իրավունքներ, սակայն չի ազատում Լիտվայի Հանրապետության Մահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին հետևելու պարտականությունից: Տվյալ հուշագիրը պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկություններ, ուստի **խնդրում ենք Ձեզ ծանոթանալ դրանց հետ:**

Պատասխանատու երկրի բնորոշման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները Դուք կարող եք գտնել մեկ ուրիշ հատուկ հուշաթերթիկի մեջ՝

ԽՆԴՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այն փաստը, որ Դուք խնդրագիր եք ներկայացնում՝ Լիտվայում ապաստան տրամադրելու վերաբերյալ, դեռ չի երաշխավորում, որ Ձեր խնդրագիրը քննարկման է դրվելու մասնավորապես այստեղ: Եթե Ձեր ընտանիքի անդամները գտնվում են Եվրամիության մի այլ երկրում, դուք Լիտվա եք ժամանել Եվրամիության մի այլ երկրից կամ Դուք ներկայում ունեք կամ անցյալում ունեցել եք այդ երկրի վիզան կամ այդ երկրում բնակվելու իրավունքը, ապա տվյալ երկիրը կարող է պատասխանատվություն կրել ապաստան տրամադրելու մասին Ձեր խնդրագրի քննարկման համար: Տվյալ դեպքում կարող է որոշում ընդունվել՝ Ձեր խնդրագիրը չքննարկելու և այն պատասխանատու երկրին Ձեզ փոխանցելու մասին, որը կքննարկի Ձեր խնդրագիրը: Եթե վճիռ կայացվի, որ հատկապես Լիտվան պետք է որոշում ընդունի ապաստան տրամադրելու մասին Ձեր խնդրագրի վերաբերյալ, ապա դա նշանակում է, որ Դուք կկարողանաք մնալ Լիտվայում, իսկ Ձեր խնդրագիրը քննարկման կդրվի այստեղ: Նման դեպքում անմիջապես կսկսվի Ձեր խնդրագրի քննարկման գործընթացը:

Ե՞ՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԿԱՐՈՂԱՆԱՄ ԲԱՅԱՏՐԵԼ ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉ ՀԱՄԱՐ

Խնդրագիրը ներկայացնելուց անմիջապես հետո այն հիմնարկության պաշտոնատար անձինք, որին Դուք հասցեագրել եք Ձեր խնդրագիրը, կիրականացնեն **նախնական հարցումը**, ինչպես նաև կընդունեն Ձեզ մոտ եղած փաստաթղթերը, կլուսանկարեն Ձեզ ու կվերցնեն Ձեր մատնահետքերը: Նախնական հարցման նպատակն է հավաքել տվյալներ Ձեր և Ձեզ հետ միասին ժամանած ընտանիքի անդամների մասին, Լիտվայի Հանրապետություն Ձեր ժամանման երթուղու վերաբերյալ, տվյալներ՝ կապված Եվրամիության այն երկրի բնորոշման հետ, որ պատասխանատու է Ձեր խնդրագրի քննարկման համար, և, ամենից գատ, բացահայտել խնդրագրի ներկայացման դրդապատճառները, ինչպես նաև այլ երկրներում Ձեր կարգավիճակը:

Ապաստան տրամադրելու մասին խնդրագրի վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ Միգրացիայի դեպարտամենտի աշխատակիցները հանդիպում կունենան Ձեզ հետ՝ **հիմնական հարցումն (հարցազրույցն)** անցկացնելու համար, որի նպատակն է Ձեզ հնարավորություն ընձեռել մանրամասնորեն պատմելու այն դրդապատճառների մասին, որոնց հետևանքով Դուք ապաստան տրամադրելու մասին խնդրագիր եք ուղղում, ինչպես նաև ներկայացնելու Ձեզ մոտ եղած այն փաստաթղթերը, որոնք Դուք դերևս չեք ներկայացրել և որոնք Ձեր պատմածի ապացույցն են հանդիսանում: Միգրացիայի դեպարտամենտի՝ հարցումն անցկացնող աշխատակցի համար էլ դա կլինի անմիջապես Ձեզանից տեղեկություններ ստանալու հնարավորություն, որն անհրաժեշտ է գնահատելու համար, թե որքանով եք Դուք համապատասխանում Լիտվայի օրենսդրությամբ սահմանված՝ ապաստան տրամադրելու հիմքերին, ինչպես նաև այլ տեղեկություններ, որ անհրաժեշտ են ապաստան տրամադրելու մասին որոշում ընդունելու համար: Անհրաժեշտության դեպքում Միգրացիայի դեպարտամենտը լրացուցիչ հարցում է կազմակերպում:

Եթե դրանում անհրաժեշտություն է զգացվում, ապա բոլոր հարցումների ընթացքում Դուք հնարավորություն կունենաք անվճար հիմունքներով օգտվել թարգմանչի ծառայություններից:

Ո՞վ էՎ ԻՆՉՊԵՆՍ ՊԵՏՔ Է ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՆԻ ԻՄ ԽՆԴՐԱԳԻՐԸ

Լիտվայի օրենսդրության համապատասխան՝ ապաստան տրամադրելու մասին խնդրագրի վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ հարկավոր է անցկացնել գործի լիակատար, անկախ և անկողմնակալ ուսումնասիրությունը: Ապաստան տրամադրելու մասին խնդրագրի քննարկումը իրենից ներկայացնում է բարդ վարչական ընթացակարգ, որը մանրամասնորեն նկարագրված է օրենքների մեջ: Ձեր խնդրագրի քննարկումը կիրականացնի և ապաստան տրամադրելու մասին որոշումը կկայացնի Միգրացիայի դեպարտամենտը: Միգրացիայի դեպարտամենտը կստուգի Ձեր կողմից ներկայացրած տեղեկությունների ճշտությունը և լրացուցիչ տվյալներ կհավաքի այն հանգամանքների վերաբերյալ, որոնց օգնությամբ Դուք հիմնավորում եք Ձեր խնդրագիրը: Այն բանից հետո, երբ հավաքված կլինեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, Միգրացիայի դեպարտամենտը կգնահատի, թե կարելի է արդյոք Լիտվայի օրենսդրության հիման վրա Ձեզ ապաստան տրամադրել, որից հետո միայն որոշում կկայացնի: Դուք կստանաք այն բոլոր որոշումները, որոնք ընդունվել են Միգրացիայի դեպարտամենտի կողմից՝ Ձեր առնչությամբ:

ՈՐՏԵ՞Ղ ԿԿԱՐՈՂԱՆԱՍ ԲՆԱԿՎԵԼ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՈՐՈՇՄԱՆԸ ՄՊԱՍԵԼԻՄ

Քանի դեռ Ձեր խնդրագիրը գտնվում է դիտարկման փուլում, Դուք իրավունք ունեք գտնվելու Լիտվայում: Եթե խնդրագիրը ներկայացրել եք սահմանային անցակետում կամ տրանզիտային գոտում, որոշակի դեպքերում ստիպված կլինեք Միգրացիայի դեպարտամենտի որոշմանը սպասել այնտեղ, որտեղ ներկայացրել եք խնդրագիրը: Բոլոր մնացած դեպքերում, եթե ցանկանաք, Ձեզ կարող է թույլատրվել Ձեր հաշվին բնակություն հաստատել Լիտվայի տարածքում գտնվող Ձեր ընտրած վայրում: Եթե

փոխէք բնակության վայրը, ապա պարտավոր եք անմիջապէս գրավոր տեղեկացնել այդ մասին Միգրացիայի դեպարտամենտը: Եթե Դուք չէք կարող ձեզ թույլ տալ Լիտվայում ինքնուրույն բնակվելու ծախսերը, Միգրացիայի դեպարտամենտը Ձեզ կտեղավորի ապաստան խնդրողների համար նախատեսված բնակության կենտրոնում, որտեղ Դուք կկարողանաք ոչ միայն բնակվել, այլ նաև սնվել, ստանալ դրամական նպաստ մանր ծախսերի համար, ստանալ բժշկական անհրաժեշտ օգնություն, հոգեբանական աջակցություն և սոցիալական ծառայություններ: Եթե հաստատվի, որ անձնական որոշակի հանգամանքների կամ որակների պատճառով Դուք խոցելի եք և ունեք հատուկ կարիքներ, Ձեզ համար կստեղծվեն տվյալ կարիքներին համապատասխան ընդունելության պայմաններ:

ԱՐՅՈՒՔ ԻՄ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑԻՆ ՓԱՍՏԱԲԱՆ Է ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ

Եթե Դուք ցանկանաք, Միգրացիայի դեպարտամենտի կամ Լիտվայի պետական այլ հիմնարկությունների աշխատակիցների հետ հարցազրույցին մասնակցելու համար կարող եք հրավիրել Ձեր շահերը ներկայացնող փաստաբանի: Եթե Դուք ցանկանում եք, որ հարցազրույցին փաստաբան մասնակցի, սակայն չէք կարող Ձեզ թույլ տալ իրավաբանական օգնության ծախսերը, տեղեկացրէք այդ մասին հարցազրույցն անցկացնող ատյանին: Այդ պարագայում, փաստաբանի ծառայությունները Ձեզ կտրամադրվեն անվճար: Բացի այդ, Դուք կարող եք իրավաբանական անվճար օգնություն ստանալու համար ինքնուրույն դիմել ապաստան խնդրողներին նման ծառայություններ և օժանդակություն ցուցաբերող ոչկառավարական կազմակերպություններին (օրինակ՝ Կարմիր Խաչի լիտվական ընկերություն, որի կոնտակտային տվյալները կարող եք գտնել այս հուշաթերթիկի մեջ): Ընդգծում ենք, որ փաստաբանի մասնակցությունը Ձեզ չի ազատում հարցազրույցին անձամբ մասնակցելու և անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունից:

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՄ ԱՐՅՈՒՔ ՆՇԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆ ԴՐԱՄ ՈՒՆԵՄ

Այո, ապաստան տրամադրելու խնդրագիրը ներկայացնելիս, Դուք պարտավոր եք նշել, թե որքան միջոցներ ունեք, ինչպես նաև գրավոր տեղեկացնել Միգրացիայի դեպարտամենտը ստացվող բոլոր միջոցների մասին (բացառությամբ ապաստան խնդրողի դրամական նպաստի)՝ դրանք ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հաստատվի, որ Դուք ունեք բավարար միջոցներ՝ վճարելու համար այն ծառայությունների դիմաց, որոնք Ձեզ մատուցվել են անվճար (ներառյալ կեցությունն ու իրավաբանական օժանդակությունը), Դուք պարտավոր կլինեք փոխհատուցել պետության կատարած ծախսերը:

ԻՆՉ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Սովորաբար, ապաստանի տրամադրման խնդրագրի դիտարկումն իրականացվում, և որոշումը կայացվում է ոչ ուշ, քան խնդրագրի ներկայացման օրից 3 ամսվա ընթացքում: Եթե Միգրացիայի դեպարտամենտին լրացուցիչ ժամանակ պահանջվի՝ Ձեր խնդրագիրը պատշաճ կերպով գնահատելու համար, ապա Ձեզ անհապաղ կտեղեկացնեն այդ մասին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵ՛Ք ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԵՏ

Միգրացիայի դեպարտամենտի կողմից Ձեր գործի դիտարկման որակը և ընդունված որոշման հիմնավորվածությունը կախված է ոչ միայն դեպարտամենտի աշխատակիցների արհեստավարժ աշխատանքից, այլ նաև Ձեր խնդրագրի հիմնավորման ուղղությամբ գործադրված Ձեր ջանքերից: Մի՛ մոռացեք, որ այդ Դո՛ւք եք դիմել մեզ օգնության խնդրանքով, ուստի մենք Ձեզանից ակնկալում ենք բարյացակամություն, համբերատարություն և Լիտվայի օրենքների հանդեպ հարգանք: Հետաքննության ընթացքում Դուք պետք է համագործակցեք Միգրացիայի դեպարտամենտի հետ, հարցազրույցին ներկայանաք նշանակված ժամին, ազնվորեն պատմեք այն պատճառների մասին, որոնք Ձեզ ստիպել են դիմել ապաստանի տրամադրման խնդրանքով, և որքան հնարավոր է շուտ ներկայացնեք Ձեր պատմությունը հաստատող առկա բոլոր փաստաթղթերը: Եթե անգամ Դուք ի վիճակի չեք որևէ փաստաթղթեր ներկայացնել, Միգրացիայի դեպարտամենտը կգնահատի Ձեր պատմությունը և կարող է Ձեզ ապաստան տրամադրելու որոշում կայացնել, եթե Ձեր պատմությունը սպառիչ է, ոչ հակասական, հետևողական և ճշմարտանման: Եթե հետաքննության ընթացքում Դուք չհամագործակցեք Միգրացիայի դեպարտամենտի հետ, հարցազրույցին չներկայանաք կամ զրույցի ժամանակ հրաժարվեք պատասխանել Ձեզ տրվող հարցերին, կարևոր տեղեկատվություն կամ կարևոր փաստաթղթեր թաքցնեք, ներկայացնեք կեղծ փաստաթղթեր կամ մոլորության մեջ զցող, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, կամ այլ կերպ խոչընդոտներ հարուցեք Ձեր խնդրագրի պատշաճ հետաքննությանը, Միգրացիայի դեպարտամենտը կարող է հիմնավորված թերահավատություն զգալ Ձեր բարեհուսության վերաբերյալ և այդ հիմքով մերժել Ձեզ ապաստան տրամադրելու խնդրանքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե Միգրացիայի դեպարտամենտի մոտ հիմնավորված կասկածներ առաջանան Ձեր տարիքի կամ Ձեզ հետ ժամանած կամ Լիտվայում Ձեզ հետ բնակվող անձանց հետ ընտանեկան կապերի առնչությամբ, Ձեզ կարող է առաջարկվել հետազոտություն անցնել՝ տարիքի կամ ընտանեկան կապերի որոշման նպատակով: Նման հետազոտությունները կարող են անցկացվել միայն Ձեր համաձայնությամբ, սակայն դրանց մասնակցելուց հրաժարվելը կարող է բացասաբար անդրադառնալ Ձեր պատմության գնահատման վրա:

Եթե ապաստան տրամադրելու խնդրանքով Ձեր խնդրագիրը հիմնվում է անցյալում տարած ֆիզիկական բռնության վրա, Միգրացիայի դեպարտամենտը կարող է Ձեզ առաջարկել բժշկական զննում անցնել, որը նույնպես անցկացվում է միայն Ձեր համաձայնությամբ: Եթե Միգրացիայի դեպարտամենտը Ձեզ բժշկական զննում չի առաջարկել, սակայն Դուք համարում եք, որ նման զննման արդյունքները կարող են հաստատել Ձեր պատմությունը, ապա Դուք իրավունք ունեք սեփական նախաձեռնությամբ և սեփական միջոցներով բժշկական զննում անցնել և դրա արդյունքները տրամադրել Միգրացիայի դեպարտամենտին:

ՈՒՄ Է ՀԱՄԱՆԵԼԻ ԼԻՆԵԼՈՒ ԻՄ ԽՆԴՐԱԳՐԻ ՄԵՁ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած ապաստան տրամադրելու խնդրանքով Ձեր խնդրագրի վերաբերյալ որոշումը կայացնելու է Միգրացիայի դեպարտամենտը, սակայն ապաստանի տրամադրման ընթացակարգին մասնակցում են Լիտվայի պետական այլ հաստատություններ ևս, որոնց, անհրաժեշտության դեպքում, փոխանցվելու է Ձեր տրամադրած տեղեկատվությունը: Սակայն նման տեղեկատվությունը ոչ մի դեպքում հանրային տարածում չի ստանա կամ չի փոխանցվի Ձեր երկրին, չի հրապարակվի ոչ այն փաստը, որ Դուք դիմել եք Լիտվայում ապաստան ստանալու համար, ոչ էլ Ձեր խնդրագրի շարժառիթները: Այդ տեղեկատվությունը չեն տարածի ոչ Միգրացիայի դեպարտամենտը, ոչ Լիտվայի պետական այլ հաստատությունները, ոչ էլ Ձեզ օժանդակող իրավաբաններն ու թարգմանիչները: Նշված բոլոր անձանց պարտականությունների մեջ է մտնում Ձեր տրամադրած տեղեկատվության գաղտնիության ապահովումը, իսկ դրա հրապարակման համար նախատեսված է պատասխանատվություն:

ԱՐՅՈՔ ԵՍ ԿԿԱՐՈՂԱՆԱՄ ՍՈՎՈՐԵԼ ԿԱՄ ԱՇԽԱՏԵԼ ԽՆԴՐԱԳՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ապաստան տրամադրելու խնդրանքով խնդրագրի դիտարկման ընթացքում Դուք չեք կարողանա աշխատել, քանի որ միայն խնդրագրի ներկայացումը նման իրավունք չի տրամադրում: Եթե Դուք ունեք անչափահաս երեխաներ կամ Դուք հանդիսանում եք անչափահաս երեխա, կարևոր է իմանալ, որ ապաստան տրամադրելու խնդրանքով խնդրագրի ներկայացրած անչափահաս անձինք իրավունք ունեն հաճախել դպրոց կամ մասնագիտական ուսումնական հաստատություն: Տվյալ իրավունքի իրացման հարցերով անհրաժեշտ է դիմել բնակության կենտրոնի սոցիալական աշխատողին կամ ապաստան տրամադրելու խնդրանքով խնդրագրի ներկայացրած անձանց օժանդակություն տրամադրող ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

ՍՊԱՍԵՔ ՁԵՐ ԽՆԴՐԱԳՐԻ ՀԱՐՅՈՎ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՎՃՌԻՆ

Եթե խնդրագրի դիտարկման ընթացքում Դուք լքեք Լիտվան կամ Միգրացիայի դեպարտամենտը չկարողանա Ձեզ հետ կապ հաստատել այլ պատճառներով, Ձեր խնդրագրի դիտարկման գործընթացը կկանգնեցվի: Դա նշանակում է, որ Միգրացիայի դեպարտամենտը չի կարողանա ավարտին հասցնել Ձեր խնդրագրի դիտարկումը և դրա վերաբերյալ որոշում կայացնել: Հետագայում Ձեր խնդրագրի դիտարկումը կարող է դադարեցվել: Այդ դեպքում, դիտարկումը չի կարող վերսկսվել, եթե անգամ Դուք ցանկանաք, իսկ ապաստան տրամադրելու խնդրանքով Ձեր ցանկացած նոր խնդրագրի կհամարվի հաջորդական խնդրագրի և կարող է դիտարկվել խստացված կարգով: Եթե Դուք համարում եք, որ Ձեզ անհրաժեշտ է ապաստան, խնդրում ենք սպասել Միգրացիայի դեպարտամենտի որոշմանը: Եթե, չսպասելով Միգրացիայի դեպարտամենտի որոշմանը, Դուք ապաստան խնդրեք Եվրամիության այլ երկրում, ապա այդ երկիրը Ձեզ կարող է Լիտվա վերադարձնել, որպեսզի այստեղ ավարտվի Ձեր խնդրագրի դիտարկումը: Եթե Դուք այլևս չեք ցանկանում, որ Ձեզ ապաստան տրամադրվի Լիտվայում, խնդրում ենք այդ մասին գրավոր տեղեկացնել Միգրացիայի դեպարտամենտին:

Այդ դեպքում, Ձեր խնդրագրի դիտարկումը կդադարեցվի, և Դուք ստիպված կլինեք վերադառնալ Ձեր երկիր:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՔԵ ԵՍ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ

Եթե Դուք համաձայն չեք այն որոշման հետ, որն ընդունել է Միգրացիայի դեպարտամենտը, այդ որոշումը ստանալու պահից հետո՝ 14 օրվա ընթացքում, Դուք կարող եք բողոք ներկայացնել Վիլնյուսի գավառի վարչական դատարան: Շատ կարևոր է, որ բողոքը ներկայացնեք նշված ժամկետում: Տվյալ ընթացակարգի շրջանակում Դուք իրավունք ունեք իրավանաբական օժանդակություն ստանալ և, եթե կա այդպիսի անհրաժեշտություն, նաև թարգմանչի օժանդակություն: Իրավաբանական օժանդակությունը նշանակում է, որ Դուք փաստաբանի իրավունք ունեք, ով կպատրաստի Ձեր փաստաթղթերը և կներկայացնի Ձեր շահերը դատարանում: Եթե դուք ցանկանում եք բողոքարկել որոշումը, սակայն չեք կարող իրավաբանական օժանդակության ծախսերը Ձեզ թույլ տալ, դիմեք Միգրացիայի դեպարտամենտ:

ԿԱՐՈ՞Ղ ԵՍ ԱՐԴՅՈՔ ՆԱԵՒ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԻՆՉ ՁԵՐԲԱԿԱԼ ԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Միգրացիայի դեպարտամենտը ձերբակալելու որոշումներ չի կայացնում և չի լուծում ձերբակալման հետ կապված հարցեր: Եթե Դուք ձերբակալված եք, ապա այդպիսի որոշում կայացրել է դատարանը, և միայն դատարանը կարող է փոփոխել տվյալ որոշումը: Եթե Դուք համաձայն չեք Ձեր ձերբակալման վերաբերյալ դատարանի որոշման հետ, ապա Դուք իրավունք ունեք սահմանված կարգով բողոք ներկայացնել Լիտվայի Գլխավոր վարչական դատարան: Եթե Ձեր ձերբակալությունը հիմնավորված էր, բայց Դուք համարում եք, որ Ձեր ձերբակալության համար այլևս հիմքեր չկան, Դուք նույնպես իրավունք ունեք դիմելու Ձեր գտնվելու վայրի շրջանային դատարան՝ խնդրելով կրկին դիտարկել ձերբակալության որոշումը: Տվյալ ընթացակարգերի ընթացքում Դուք փաստաբանի օժանդակության իրավունք ունեք և, եթե կա այդպիսի անհրաժեշտություն, նաև թարգմանչի: Եթե Դուք ցանկանում եք դիմել դատարան ձերբակալության հարցով, բայց չեք կարող փաստաբանի օժանդակության ծախսերը Ձեզ թույլ տալ, ապա դիմեք Միգրացիայի դեպարտամենտ:

ԿԱՐԵՎՈՐ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ՝

Միգրացիայի դեպարտամենտ

Սապեգոս փող., 1, 10312 ք. Վիլնյուս,

Հեռ. +370 5 271 7112

Էլեկտրոնային փոստի հասցե. md.rastine@vrm.lt

<http://www.migracija.lt>

Օտարերկրյա անձանց հաշվառման կենտրոն

Վիլնյաուս փող., 100, 18177 ք. Պաբրադե, Շվենչոնսկի շրջան

Հեռ. +370 3 87 53401

Էլեկտրոնային փոստի հասցե. urc.sekretore@vsat.vrm.lt

Փախստականների ընդունման կենտրոն

Կարայաուս Մինդաուգո փող., 18, 55283 ք. Ռուկլա, Յոնավսկի շրջան

Հեռ. +370 3 497 3377, +370 698 48776

Էլեկտրոնային փոստի հասցե. centras@rppc.lt

<http://www.rppc.lt>

Լիտվայի Հանրապետությունում ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) ներկայացուցչություն

Ս. Յակշտո փող., 12, 01105 ք. Վիլնյուս

Հեռ. +370 5 210 7416

Էլեկտրոնային փոստի հասցե kules@unhcr.org

<http://www.unhcr.se/lt/home.html>

UNHCR-ը կարող է տեղեկատվություն և խորհուրդներ տրամադրել՝ ապաստանի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ և Լիտվայում ապաստան խնդրողներին ու փախստականներին ցուցաբերվող օգնության վերաբերյալ:

Միգրացիայի միջազգային կազմակերպության Վիլնյուսի բյուրո (IOM)

Յակշտո փող., 12, 01105 ք. Վիլնյուս

Հեռ. +370 5 261 0115

Էլեկտրոնային փոստի հասցե. iomvilnius@iom.lt

<http://www.iom.lt>

IOM-ը օգնություն է ցուցաբերում միգրանտների՝ կամավոր տուն վերադառնալու հարցում, որը համապատասխանում է օտարերկրյա անձի կարիքներին և ապահովում անվտանգ տունդարձը: Օտարերկրյա անձանց, ում դա անհրաժեշտ է, նաև օժանդակություն է ցուցաբերվում վերաինտեգրման հարցում:

Կարմիր Խաչի Լիտվայի Ընկերակցություն

Ս. Յուոզապավիչյաուս փող., 10Ս, 09316 ք. Վիլնյուս

Հեռ. +370 5 212 7322, +370 686 30 050

Էլեկտրոնային փոստի հասցե. info@redcross.lt

<http://www.redcross.lt>

Կարմիր Խաչի Լիտվայի Ընկերակցությունը իրավաբանական և մարդասիրական օգնություն է ցուցաբերում, ինչպես նաև օժանդակում ընտանիքի անդամներին և մերձավորներին փնտրելու հարցում:

Վիլնյուսի «Caritas» արքեպիսկոպոսություն

Օդմինյու փող., 12, 01122 ք. Վիլնյուս

Հեռ. +370 5 261 1014

Էլեկտրոնային փոստի հասցե. info@vilnius.caritas.lt

<http://www.vilnius.caritas.lt>

ՈՐՏԵ՞Ղ Է ՆՇՎԱԾ, ԹԵ ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ԱՊԱՍՏԱՆ ԽՆԴՐՈՂՆԵՐԸ

Ապաստան խնդրողների՝ տվյալ հուշաթերթիկում հիշատակվող հիմնական իրավունքներն ու պարտականությունները նախատեսված են «Օտարերկրյա անձանց իրավական կարգավիճակի մասին» Լիտվայի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-3 մասերով:

Հոդված 71. Լիտվայի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին խնդրագիր ներկայացրած անձի իրավունքներն ու պարտականությունները.

1. Լիտվայի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին խնդրագիր ներկայացրած անձն ունի հետևյալ իրավունքները.

1) բնակվելով Լիտվայի Հանրապետության ատյանների կողմից նշանակված բնակության վայրերում, ձերբակալման վայրերում, սահմանային անցակետերում և տրանզիտային գոտիներում՝ կարող է օգտվել ընդունելության նյութական պայմաններից;

2) անվճար ստանալ տեղեկատվություն իր իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև ապաստան տրամադրելու մասին խնդրագրի դիտարկման ընթացքում դրանց չկատարման հետևանքների մասին, ինչպես նաև ապաստան տրամադրելու մասին խնդրագրի դիտարկման հետ կապված տեղեկատվություն;

3) ապաստան տրամադրելու մասին խնդրագրի դիտարկման հետ կապված փաստաթղթերը կանոնակարգել և ձևակերպել նոտարական կարգով;

4) Ներքին գործերի նախարարի նախատեսած կարգով օգտվել պետության կողմից երաշխավորվող իրավական օժանդակությունից;

5) ստանալ փոխհատուցում հանրային տրանսպորտի միջոցներից օգտվելու համար, եթե դրանցից օգտվելը կապված է ապաստան տրամադրելու մասին խնդրագրի դիտարկման հետ;

6) անվճար օգտվել թարգմանչի ծառայություններից;

7) Օտարերկրյա անձանց հաշվառման կենտրոնում կամ Փախստականների ընդունման կենտրոնում անվճար ստանալ անհրաժեշտ բժշկական, հոգեբանական օգնություն և սոցիալական ծառայություններ;

8) Ներքին գործերի նախարարի և Սոցիալական պաշտպանության ու աշխատանքի նախարարի նախատեսած կարգով ամեն ամիս ստանալ դրամական նպաստ՝ պետության կողմից ապահովվող եկամուտների 10 տոկոսի չափով;

9) դիմել ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչներին և օժանդակության տրամադրման խնդրագիր ներկայացրած անձանց մասնագիտացված իրավաբանական օգնություն կամ խորհրդատվություն տրամադրող այլ կազմակերպության ներկայացուցիչներին, և հանդիպել նրանց հետ զաղտնիություն ապահովող պայմաններում (ներառյալ սահմանային անցակետերն ու տրանզիտային գոտիները);

10) խոցելի անձ ճանաչվելու դեպքում՝ օգտվել իր հատուկ կարիքներին համապատասխանող ընդունելության պայմաններից;

11) օգտվել այլ իրավունքներից, որոնք իրեն երաշխավորված են միջազգային պայմանագրերին, օրենքներին և Լիտվայի Հանրապետության իրավական այլ ակտերին համապատասխան:

2. Ապաստան ստանալու մասին խնդրագիր ներկայացրած անչափահաս անձինք իրավունք ունեն ուսում ստանալու հանրակրթական դաստիարակության և մասնագիտական ուսուցման ծրագրով (ծրագրերով)՝ Կրթության և գիտության նախարարի նախատեսած կարգով: Տվյալ իրավունքը ապահովվում է անհապաղ և ոչ ուշ, քան ապաստանի տրամադրման մասին խնդրագրի ներկայացման օրից երեք ամսվա ընթացքում: Ապաստանի տրամադրման մասին խնդրագիր ներկայացրած անձը, որը ուսուցումը սկսել է՝ լինելով անչափահաս, իրավունք ունի ավարտել ուսումը հանրակրթական դաստիարակության և մասնագիտական ուսուցման ծրագրով (ծրագրերով), նույնիսկ եթե ուսուցման ընթացքում նա չափահաս է դարձել:

3. Ապաստան ստանալու մասին խնդրագիր ներկայացրած անձի պարտականությունները.

1) պահպանել Լիտվայի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական այլ ակտերի պահանջները;

2) կատարել ապաստան ստանալու մասին խնդրագիր ներկայացրած անձի նկատմամբ Միգրացիայի դեպարտամենտի և դատարանի վճիռներով սահմանված պարտականությունները;

3) թույլ տալ բժշկին ստուգել առողջական վիճակը;

4) ապաստան ստանալու մասին խնդրագրի դիտարկման ընթացքում տրամադրել բոլոր առկա փաստաթղթերն ու իրականությանը համապատասխանող բացատրությունները՝ ապաստան ստանալու մասին խնդրագրի շարժառիթների, սեփական անձի, ինչպես նաև Լիտվայի Հանրապետություն ժամանման հանգամանքների վերաբերյալ, և շփվել պետական ծառայողների ու կոմպետենտ ատյանների աշխատակիցների հետ;

5) գրավոր տեսքով, հարցազրույցի անցկացման ժամանակ, պետական հաստատությանը կամ այն հիմնարկությանը, որին ներկայացվել է ապաստան ստանալու մասին խնդրագիրը, հայտարարագրել միջոցները և Լիտվայի Հանրապետությունում ունեցած գույքը, և Միգրացիայի դեպարտամենտին ազատ ձևով՝ գրավոր տեսքով, հայտարարագրել Լիտվայի Հանրապետության տարածքում գտնվելու իրավունքի գործողության ժամանակահատվածում՝ դրա ստացման պահից 3 օրվա ընթացքում;

6) Միգրացիայի դեպարտամենտին անհապաղ գրավոր տեսքով հայտնել բնակության վայրի փոփոխության մասին, եթե Միգրացիայի դեպարտամենտի որոշմամբ թույլատրված է բնակություն հաստատել ընտրված վայրում:

Տվյալ հուշաթերթիկում հիշատակվող այլ իրավունքներն ու պարտականությունները սահմանված են նույն օրենքի 22¹ հոդվածի 1-ին մասով, 67 հոդվածի 3-րդ մասով, 71 հոդվածի 5-րդ մասով, 82¹ հոդվածի 3-րդ մասով, 117 հոդվածի 1-ին մասով, 118 հոդվածի 1-ին մասով և 136 հոդվածով:

Տվյալ հուշաթերթիկում ներկայացված է ապաստանի տրամադրման ընթացակարգերի, ապաստան խնդրողների հիմնական իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև տվյալ պարտականությունների չկատարման հնարավոր հետևանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն: Տվյալ հուշաթերթիկը կրում է տեղեկատվական բնույթ, այն չի ստեղծում և (կամ) չի տրամադրում իրավունքներ, դրա միջոցով չեն սահմանվում և չեն ստանձնվում իրավական պարտավորություններ: Եթե Դուք տվյալ հուշաթերթիկում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների կարիք ունեք կամ ցանկանում եք իմանալ ավելին Ձեր խնդրագրի դիտարկման ընթացքի վերաբերյալ, խնդրում ենք դիմել Միգրացիայի դեպարտամենտ: